նոքա ոչ ևս են տեսանելոց զերեսս իմ, և թէ գայցեն աստ՝ գանելոց եմ զնոսա սաստիկ: Եւ տան զնշանն արանցն որ գնային անդ և գային, զնշան Թըլթըլին և զէսիլի թոռին. և եկեալ մեզ պատմեցին զայսոսիկ:

Օրս ի պահու երեկոյիս եմուտ վէզիրն ի նաւ եւ եկն առ թագաւորն ոչ գիտելով ումեք բնաւ, և խորհուրդ արարեալ ընդ թագաւորին՝ խրատելով զնա, և ել գնաց արտաքս ի քաղաքէն, զգիշերն անդ կացեալ ի տեղին որ կոչի Սիլիվրու:

Եւ առաւօտուս որ է երկի (6 Մարտ) եկն ի յարտաքոյ և եմուտ ի քաղաքս մեծամեծօք զոր գնացեալ էին ընդ առաջ նորա, և եկն եմուտ առ թագաւորն, և եկն ի պալատն իւր: Եւ յառաջագոյն[1]) պատուիրեալ էր եւ նամակ ուղարկեալ այսր զի մի գայցեն ընդ առաջ իւր պատուով և բազմամբոխիւ ծառայիցն, որպէս Իփչիրին եղև:

Եւ ի սոյն առաւօտուս ե եկեղեցոյ իշխանքն եկին ի Սուրբ Նիկողոս թէ Մարդ գնեմք ի վերայ Մուղնեցուն որ երթայ, և ոչ բռնեց գլուխ: Եւ ի պահուս եկն Զաքարիան և խօսս եղեալ որ կայր ի սիրտն, մի երկու բան ասաց Վարդապետին. և նա բազումս նզովեաց և անէծ գնա, ել և գնաց. և յետ պահու մի ոչ ժուժեալ ի տանն, այլ եկեալ թէ Համբուրեմ զձի[2]), և նա ոչ ետ, այլ զուն համբուրեալ և նստեալ անդ և Վարդապետան բնաւին ոչ խօսեցաւ: Եւ սոյն օր չարժ եղեալ, մեք չիմացաք: Եւ ի սմին օր յառաջ քան զկէս օրն տարեալ վէզիրն զՋուռնադանն և ագուցեալ խիլայս ճոխութեան եւ եդեալ ի վերայ նաւարկութեանց՝ զափուտան առնելով կրկին, որպէս յառաջագոյն կայր ի վերայ այնմ գործոյն: Եւս և Հասան աղային Շամլոյ և Մէհէմէտ աղային և որ զկնի սոցա

1) յառագագոյն. 2) զձս.